ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք,
Է. Նավասարդյան 19/1, Հեռ. 095 702854 ,
armavir.shahumyan@mta.gov.am

N 50
06 հունիս 2016թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱԾՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարո՛ն Ղահրամանյան.

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիս ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 14 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Համբարձումյան
095.14-30-60

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.74/6713-16
«10» 06 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մայիսի 2016թվականի N 14-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N62-Ն որոշման 2-րդ կետը, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N62-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1) 05 բաժին 1 խումբ 1 դասի <<Շրջակա միջավայրի պաշտպանություն>> ծրագրի 4213 (աղբահանություն) հոդվածին ավելացնել 60000/վաթսուն հազար/ ՀՀ դրամ,

2) 09 բաժին 1 խումբ 1 դասի <<Նախադպրոցական և տարրական կրթության>> ծրագրի 4239(ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 860000/ութ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ,

3) 10 բաժին 7 խումբ 1 դասի <<Սոցիալական պաշտպանություն>> ծրագրի 4279 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին ավելացնել 800000/ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16թ. մայիսի 2
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 մայիսի 2016թվականի N 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասով՝ ***որոշում եմ.***

1. Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների՝
 1/ Գրիգորյան Արա Ջիվանի /ծածկագիր 3.1-2/
 2/ Բաբսեղյան Հասմիկ Արտուշի / ծածկագիր 3.2-1/
ատեստավորումն անցկացնել 2016 թվականի հունիսի 3-ին ժամը 14:00-ին, Շահումյանի համայնքապետարանի շենքում:

2. Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների՝
 1/Համբարձումյան Գոհար Մխիթարի /ծածկագիր 1.2-1/
 2/Հակոբյան Սոֆիա Ցոլակի /ծածկագիր 3.1-1/
 3/Մանուկյան Զիաթխան Մոսեսի/ծածկագիր 3.2-2/
 4/Հախումյան Ռաչիյա Արտուշի /ծածկագիր 3.3-1/
ատեստավորումն անցկացնել 2016 թվականի հունիսի 3-ին ժամը՝ 16:00-ին, Շահումյանի համայնքապետարանի շենքում:

3.Ատեստավորման նախապատրաստման աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16 թ. մայիսի 2
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մայիսի 2016թվականի N 16-Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ, 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 30-ի թիվ 6 արտահերթ նիստի թիվ 2 որոշումը և Հասմիկ Իշխանի Հարությունյանի 2016 թվականի մայիսի 11-ի դիմումը, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան գյուղում գտնվող Հասմիկ Իշխանի Հարությունյանին պատկանող ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի տնամերձ հողամասին /ծածկագիր 04-077-009-012/ և նրա վրա առկա բնակելի տանը տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գ.Շահումյան Ի.Հարությունյան փող., թիվ 45 տուն:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16 թ. մայիսի 11
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2016թվականի N 17-Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ, 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետոության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 30-ի թիվ 6 արտահերթ նիստի թիվ 2 որոշումը և Գրիշա Ժորայի Գալստյանի 2016 թվականի մայիսի 16-ի դիմումը. *Որոշում եմ*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքում գտնվող Գրիշա Ժորայի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 04-077-026-005/ 0,119 հա տնամերձ հողամասին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գ. Շահումյան Ջիվանու փող., թիվ 10 հողամաս:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

20 16 թ. մայիսի 17
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մայիսի 2016թվականի N 18-Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ, 17-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 30-ի թիվ 6 արտահերթ նիստի թիվ 2 որոշումը և Օնիկ Երջանիկի Մանուկյանի 2016 թվականի մայիսի 17-ի դիմումը, *որոշում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան գյուղում գտնվող Օնիկ Երջանիկի Մանուկյանին /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, տրված 17.05.2016 թվականին/ պատկանող /ծածկագիր 04-077-0028-0002/ տնամերձ հողամասին և նրա վրա առկա բնակելի տանը և օժանդակ շինություններին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գ.Շահումյան Լ.Նավասարդյան փող., թիվ 8 տուն:

2.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

20 16թ. մայիսի 17
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2016թվականի N 19-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Շահումյան համայնքի բնակիչ Օնիկ Երջանիկի Մանուկյանը (ծնված 07.11.1983 թ.) դիմել է Արմավիրի մարզի Շահումյան համայնքի Լ.Նավասարդյան 8 հասցեում գտնվող իրեն պատկանող (ըստ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 14.08.1991 թ. թիվ 9 որոշման, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի տրված 17.05.2016 թ., սեղանամատյան 1903) 0.09 հա օրինական հողամասին կից ավել օգտագործվող 0,026 հա ավել օգտագործվող հողամասի, օրինական հողամասի և ավել օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:
Հաշվի առնելով, որ բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001 թ. , հողամասը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, *որոշում եմ*՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Շահումյան համայնքի Լ.Նավասարդյան 8 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Օնիկ Երջանիկի Մանուկյանի (ծնված 07.11.1983 թ.) գույքային իրավունքը՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.09 հա հողամասին կից ավել օգտագործվող 0.026 հա հողամասի, ընդհանուր հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների (բնակելի տուն՝ 353.0 քմ կառուցված 1956-1965 թթ., ավտոտնակ 26.2 քմ կառուցված 1985 թ.) նկատմամբ: Բնակելի տունը բավարարում է << ՀՀ համայնքային վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները:

Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Օնիկ Երջանիկի Մանուկյանի (ծնված 07.11.1983 թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և հողամասում առկա բնակելի տան նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ Լ. Նավասարդյան փող. 8 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**

20 16 թ. մայիսի 20
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2016թվականի N 20-Ա

2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N62-Ն որոշման 2-րդ կետը. *որոշում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեի ծախսերի նախահաշվի՝

1/ 01 բաժին 1 խումբ 1դաս /օրենսդիր և գործադիր մարմիններ/ ծրագրով 4214 /կապի ծառայություն/ հոդվածի ժամանակացույցով նախատեսված դեկտեմբեր ամսվա 96000 /իննսունվեց հազար/ ՀՀ դրամը տեղափոխել մայիս ամիս,

2/ 08 բաժին 2 խումբ 3 դաս /մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ/ ծրագրի 4111/աշխատողների աշխատավարձեր/ հոդվածի ժամանակացույցով նախատեսված դեկտեմբեր ամսվա 7000000/յոթ միլիոն/ ՀՀ դրամը տեղափոխել մայիս ամիս:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16 թ. մայիսի 20
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2016թվականի N 21-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի <<Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու մասին>> N12-Ն որոշմամբ հաստատված N1 և N2 հավելվածների 8-րդ կետով, հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով, *որոշում եմ*՝

1. 2016 թվականի հունիսի 3-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների ատեստավորման հանձնաժողովում լիազորված անձ նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Ասյա Նավասարդյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16թ. մայիսի 25
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

03 մայիսի 2016թվականի N 17-Ա

ԱՍՅԱ ԼԵՎՈՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, *կարգադրում եմ*՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ Ասյա Նավասարդյանին 2016 թվականի մայիսի 3-ին գործուղել Արմավիրի մարզպետարան՝ մասնակցելու մարզխորհուրդի նիստին:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին /Ս. Հակոբյան/՝ օրենքով սահմանված կարգով վճարել գործուղման ծախսերը:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16 թ. մայիսի 3
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

06 մայիսի 2016թվականի N 18-Ա

ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի <<Է>> կետով, *կարգադրում եմ*՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Համբարձումյանին 2016 թվականի մայիսի 6-ին և 7-ին գործուղել Արմավիրի մարզպետարան՝ աշխատանքային այցով:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին /Ս.Հակոբյան/՝ սահմանված կարգով վճարել գործուղման ծախսերը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16 թ. մայիսի 6
գ.Շահումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

11 մայիսի 2016թվականի N 19-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով, սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական պայմանների ուսումնասիրության նպատակով, *կարգադրում եմ՝*

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին /Ա.Նավասարդյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մեկօրյա ժամկետում կատարված աշխատանքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16 թ. մայիսի 11
գ.Շահումյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյան համայնքի
ղեկավարի 2016 թվականի մարտի 11-ի
թիվ 19-Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Հանձնաժողովի նախագահ՝
   Ա.Նավասարդյան /համայնքի ղեկավարի տեղակալ/

2. Հանձնաժողովի անդամներ՝
   1) Ս.Հակոբյան /համայնքապետարանի առաջատար մասնագետ/
   2) Հ. Բարսեղյան /համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ/
   3) Վ. Համբարձումյան /մշակույթի տան տնօրեն/

Աշխատակազմի քարտուղար Գ. Մ. Համբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, armavir.shahumyan@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31 մայիսի 2016թվականի N 20-Ա

ԳՈՀԱՐ ՄԽԻԹԱՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի <<է>> կետով, *կարգադրում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Համբարձումյանին 2016 թվականի մայիսի 31-ին գործուղել Արմավիրի մարզպետարան՝ ՏԻՄ և իրավաբանական բաժին:

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին /Ս.Հակոբյան/՝ սահմանված կարգով վճարել գործուղման ծախսերը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.Գ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

20 16 թ. մայիսի 31
գ.Շահումյան